# ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻ ՓՈՔՐԻԿ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիի հայկական դպրոցների մանկավարժների համար Ուսուցչի օրը նշանավորվեց մի հաճելի անակնկալով: Առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցում նրանց շնորհավորեցին մասնագիտական տոնի առիթով, և շնորհավորանքն ուղեկցվեց նվերներով, որոնք տրվեցին Վիրահայոց թեմի կողմից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի օժանդակությամբ: Իսկ միջոցառումը նախաձեռնվել և կազմակերպվել էր Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանի, Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գեորգի Խոսրոևի և Վրաստանի կրթության նախարարության ազգային ծրագրերի փոխկապակցման վարչության պետ Նորայր Բաղդասարյանի նախաձեռնությամբ.

Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը շնորհավորանքի իր խոսքում առանձնապես շեշտեց սփյուռքահայ կրթօջախների պահպանման կարևորությունն ազգապահպանության գործում:

- Մեր նպատակն է քաջալերել մեր ուսուցիչներին և գոնե այս կերպով գնահատել նրանց ազգապահպան աշխատանքը: Հորդորել, որ այսուհետև ևս շարունակեն իրենց նվիրյալ ծառայությունը հանուն հայ մանուկների հայեցի դաստիարակության:

Իր լինելիության ողջ ընթացքում Հայ Եկեղեցին հանդես է եկել նաև ազգապահպան առաքելությամբ, ուստի պատահական չէր Սուրբ Գևորգ եկեղեցում կատարվածը. գեղեցիկ իրադարձությունը հայ դպրության մշակների հայրենանվեր աշխատանքի գնահատման մի փոքրիկ արտահայտություն էր:

*ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*
*Ուսուցչուհի*